Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2023թ. ապրիլի 29-ի N 181-Ա հրամանի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2022 թվականի

«Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին) հաշվետու տարում իրականացված ներքին աուդիտի վերաբերյալ տարեկան ամփոփ հաշվետվություններ են ներկայացվել Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի թվով 55 մարմինների կողմից (տե՛ս Ցանկ N 1 և Ցանկ N 2), այդ թվում 43 պետական և տարածքային կառավարման մարմինների (այսուհետ՝ ՊՄ) և 12 տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) կողմից:

Ներքին աուդիտ իրականացրած թվով 55 պետական և տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից թվով 32-ում ներքին աուդիտի աշխատանքների իրականացումը արտապատվիրակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված՝ Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ Կազմակերպություններ), այդ թվում 28 ՊՄ-ներում և 4 ՏԻՄ-երում:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 43 ՊՄ-ների կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 15-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ թվով 28-ում՝ Կազմակերպությունների միջոցով:

Ներքին աուդիտ չի իրականացվել թվով 6 ՊՄ-ներում, ինչը թվով 4-ի պարագայում պայմանավորված է ներքին աուդիտի ստորաբաժանումների լուծարված լինելու պարագայում ներքին աուդիտ ծառայության ձեռքբերման նպատակով մրցույթներ չկայանալու հանգամանքով, թվով 1-ում (ՀՀ նախագահի աշխատակազմ) հաստիքները համալրված չեն եղել, ՀՀ ոստիկանությունում ներքին աուդիտի կազմակերպման գործընթացը կասեցվել է մինչև ներքին գործերի նախարարության ձևավորումը:

Ներքին աուդիտի իրականացման վերաբերյալ թվով 12 ՏԻՄ-երի կողմից Լիազոր մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն թվով 8-ում ներքին աուդիտն իրականացվել է ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով, իսկ թվով 4-ում՝ Կազմակերպությունների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Լիազոր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով վարվել և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը», «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկը» (այսուհետ՝ Ցանկեր): Այդ Ցանկերում ներառված տվյալների համաձայն 2022 թվականի տարեսկզբին Ցանկերում ընդգրկված թվով 275 աուդիտորներից թվով 81-ը հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատողներ, իսկ 2022 թվականի ավարտին թվով 218 աուդիտորներից՝ միայն թվով 75-ը:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2022 թվականին իրականացվել է տարեսկզբին Ցանկերում ընդգրկված 275 որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների կազմակերպումը, որի նպատակով նախատեսվել են և ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հրապարակվել են պարտադիր 14 և 8 լրացուցիչ թեմաներ (որոնցից ըստ հայեցողության ընտրվում են 2-ը): Ընդ որում պարտադիր թեմաները ստորաբաժանման ղեկավարի պարտականություններ իրականացնող ներքին աուդիտորների համար ներկայացված են առանձին:

2022 թվականին կազմակերպվել են թվով 11 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են թվով 184 որակավորված ներքին աուդիտորներ, ընդ որում թվով 35-ը՝ ներքին աուդիտի ղեկավարի պարտականություններ կատարողներ: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած թվով 184 աուդիտորներից թվով 72-ը հանրային հատվածի

աշխատողներ են, այդ թվում 55-ը՝ ՊՄ-ների, 17-ը՝ ՏԻՄ-երի և 34-ը Կազմակերպությունների աշխատողներ, 78-ը՝ ֆիզիկական անձինք: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցած աուդիտորների թվաքանակը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 32-ով կամ 14.8%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 58-ով կամ 23.9 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկերում ընդգրկված թվով 91 աուդիտորներ, որից թվով 65 աուդիտորներ վերապատրաստման դասընթացին մասնակցության հայտ չներկայացնելու, թվով 24-ը դասընթացին չմասնակցելու, թվով 1-ը երեխայի խնամքի արձակուրդում և թվով 1-ը հիվանդության արձակուրդում գտնվելու պատճառով: Վերապատրաստման դասընթացների փուլին չմասնակցած աուդիտորների թվաքանակը 2021 թվականին ավելացել է 32-ով կամ 54.2 %-ով, իսկ 2020 թվականի համեմատ նվազել է 28-ով կամ 23.5 %-ով:

Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների արդյունքներով կազմակերպվել և անց է կացվել թեստավորում, որի արդյունքներով թեստավորման ենթակա 182 ներքին աուդիտորներից թեստավորվել են 180-ը, 2-ը չեն ներկայացել թեստավորմանը:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորման փուլին մասնակցած թվով 180 աուդիտորներից թվով 72 աուդիտորներ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում՝ 55-ը ՊՄ-ների, 17-ը ՏԻՄ-երի, իսկ թվով 108-ը չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների աուդիտորներ (78-ը ֆիզիկական անձինք են, 30-ը՝ Կազմակերպությունների աշխատակիցներ):

Շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորմանը մասնակցած աուդիտորների թվաքանակը 2021 թվականի համեմատությամբ պակասել է 31-ով կամ 14.6%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ պակասել է 62-ով կամ 29.3 %-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 180 աուդիտորներից թվով 178-ը հաղթահարել են թեստավորման նվազագույն շեմը, իսկ թվով 2 աուդիտորներ (ֆիզիկական անձ) չեն հաղթահարել սահմանված նվազագույն շեմը: Թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների քանակը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 3-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ ավելացել է 5-ով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել է և նրանց անունները հանվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերից:

Այսպիսով, 2022 թվականի ընթացքում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկերում ընդգրկված թվով 95 աուդիտորներ, որից թվով 91-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, թվով 2-ը թեստին չներկայանալու և թվով 2-ը թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու հետևանքով: Նշված ցուցանիշը 2021 թվականի համեմատ աճել է 80-ով կամ 84.2 %-ով, իսկ 2020 թվականի համեմատ նվազել է 27-ով կամ 71.6 %-ով:

Ստորև գծապատկերում ներկայացված են կազմակերպված շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, թեստավորմանը մասնակցած, ինչպես նաև ներքին աուդիտորի որակավորումը դադարեցված աուդիտորների 2020-2022 թվականների համեմատական ամփոփ ցուցանիշները:



«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2022 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 8 որակավորման քննություն: Որակավորման քննություններին, ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ են ներկայացրել թվով 68 դիմորդներ: Նշված ցուցանիշը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 6-ով կամ 8%-ով, 2020 թվականի համեմատությամբ ավելացել է՝ 57-ով կամ շուրջ 5 անգամ:

Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 68 դիմորդներից որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են թվով 33 դիմորդներ և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ներառվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող՝ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին համապատասխան «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում» ընդգրկվելու նպատակով, 2022 թվականի ընթացքում ստացվել է 5 դիմում և բոլորն էլ բավարարվել են, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և նրանք համապատասխանաբար ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված, ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:

Նշված ցուցանիշը 2021 թվականի համեմատությամբ նվազել է 17-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 28-ով:

Այսպիսով, համադրելով ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերում ընդգրկվածության վերաբերյալ վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքները, ստացվում է, որ 2022 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 218 աուդիտոր, որը նախորդ 2021թ. համեմատությամբ նվազել է

ընդամենը 56-ով կամ 25.6%-ով և 2020թ. համեմատությամբ՝ 57-ով կամ 26.1%-ով:

Ստորև գծապատկերում բերված են հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող և Ցանկերում ընդգրկվածության 2020-2022 թվականների ամփոփ ցուցանիշները:



Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված աուդիտորների վերաբերյալ 2020-2022 թվականների համապատասխան ցուցանիշների դինամիկան արտացոլված է ստորև ներկայացված գծապատկերում.



2022 թվականին 2020-2021 թվականների համեմատությամբ փոփոխության է ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրավված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝ 2022 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը 2021 թվականի համեմատությամբ պակասել է 6-ով կամ 7.4%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 2-ով կամ 12.5%-ով, միևնույն ժամանակ 2020 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 15-ով կամ 16.6%-ով, իսկ ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 13-ով կամ 48.1%-ով:

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2020-2022 թվականների, ունի հետևյալ պատկերը:



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 89 աուդիտորներից թվով 72-ը հանդիսանում են ՊՄ-ների, իսկ թվով 18-ը՝ ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ: 2022

թվականին 2021 թվականի համեմատությամբ ՊՄ-ների աուդիտորների թիվը ավելացել է 1-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 8-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ ՊՄ-ների աուդիտորների թվաքանակը պակասել է 10-ով, իսկ ՏԻՄ-երի աուդիտորների թվաքանակը պակասել է 17:



2022 թվականին «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկվելու նպատակով ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեությամբ զբաղվող Կազմակերպություններից ստացվել է 3 հայտ, որոնք բավարարվել են և այդ կազմակերպություններն ընդգրկվել են «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում», տարեսկզբի 13 Կազմակերպությունից հասնելով 16-ի:

ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները խախտելու պատճառով 6 Կազմակերպություն դուրս են մնացել հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից:

Այսպիսով 2022 թվականի տարեվերջին «Հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում» ընդգրկված կազմակերպությունների թիվը 10 է: Նշված ցուցանիշը 2021 թվականների համեմատությամբ նվազել է 3-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 4-ով:

Հաշվետու տարվա ավարտին՝ ՀՀ հանրային հատվածի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված ներքին աուդիտի արդյունքների և ներքին աուդիտի աշխատանքների վերաբերյալ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությունների, ինչպես նաև հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2022 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 3239 միավորից 949-ը կամ 29.3%-ը և 17467 գործառույթից 6432-ը կամ 36.8%-ը: Նշված ցուցանիշը 2021 թվականի համեմատությամբ աճել է՝ ըստ միավորների 11.1%-ով և ըստ գործառույթների՝ 15.2%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ համապատասխանաբար 35.0%-ով և 53.0%-ով:

2022 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների և ՏԻՄ-երի 949 միավոր և 6248 գործառույթ կամ աուդիտի միջավայրի 29.3%-ը: Նշված ցուցանիշը, 2021 թվականի համեմատությամբ ըստ միավորների աճել է 10.6%-ով և ըստ գործառույթների 27.4%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել է համապատասխանաբար 94.1%-ով և 2.3 անգամ:

Ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վերոհիշյալ ցուցանիշները ունեն հետևյալ պատկերը.

ՊՄ-ների 2399 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 817-ը կամ միավորների 34.1%-ը և 14443 գործառույթից՝ 5884-ը կամ 40.7%-ը, 2021 թվականին պլանավորված միավորների 34.0%-ի և գործառույթների 42.6%-ի դիմաց, իսկ 2020 թվականին, համապատասխանաբար 21.6%-ի և 26.8%-ի դիմաց:

2022 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ-ների 825 միավոր կամ 34.4% և 5734 գործառույթ կամ 39.7%, 2021 թվականին՝ միավորների 34.7%-ը և գործառույթների 39.9 %-ը, իսկ 2020 թվականին՝ միավորների 21.7%-ը, գործառույթների 22.9%-ը:

Միևնույն ժամանակ ՏԻՄ-երի գծով հաշվետու տարում՝

պլանավորվել է 840 միավորներից աուդիտի ենթարկել 132 միավոր կամ միավորների 15.7%-ը և 3024 գործառույթից՝ 548-ը կամ 18.1%-ը, 2021 թվականին՝ միավորների 20.9%-ը և գործառույթների 16.5%, 2020 թվականին համապատասխանաբար 24.9%-ը և 30.6%-ը.

փաստացի աուդիտի է ենթարկվել 124 միավոր կամ դրանց 14.8%-ը և 514 գործառույթ կամ 17.0%-ը, 2021 թվականի միավորների 19.4%-ի և գործառույթների 15.6%-ի, 2020 թվականի համապատասխանաբար 19.0%-ի և 24.4%-ի դիմաց:

Համադրելով այս ցուցանիշները ստացվում է, որ 2022 թվականի ՊՄ-ների և ՏԻՄ-երի փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 100.0%, իսկ ըստ գործառույթների՝ 97.1%, 2021 թվականի համապատասխանաբար 99.7%-ի և 93.8%-ի, իսկ 2020 թվականի՝ 87.6%-ի և 81.6%-ի դիմաց:

Փաստացի կատարողականի ցուցանիշը ըստ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետևյալն է.

ՊՄ-ների դեպքում ըստ միավորների 2022 թվականին այն գերակատարվել է՝ կազմելով 1.0%: 2021 և 2020 թվականների համեմատ համապատասխանաբար 1.8% և 1.1%, ըստ գործառույթների թերակատարվել է՝ 2022 թվականին՝ 97.5%, 2021 թվականին՝ 93.6%, 2020 թվականին՝ 83.2%.

ՏԻՄ-երի դեպքում ըստ միավորների 2022 թվականին այն կազմել է 93.9%, 2021 թվականին՝ 92.8%, 2020 թվականին՝ 75.6%, ըստ գործառույթների՝ 2022 թվականին՝ 93.8%, 2021 թվականին՝ 94.5%, 2020 թվականին՝ 79.7%:

2021 թվականի տարեկան ծրագրով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պլանավորել են իրականացնել 1047 առաջադրանք[1], որը 2021 թվականի համեմատությամբ աճել է 170-ով կամ 19.4%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ աճել է 366-ով կամ 53.7%-ով: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2022 թվականին 908 առաջադրանք, 2021 թվականին 662 առաջադրանք, 2020 թվականին 344 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպում՝ 2022 թվականին՝ 139, 2021 թվականին՝ 215, 2020 թվականին՝ 340 առաջադրանքներ:

2021 թվականի տարեկան ծրագրով պլանավորված թվով 1047 առաջադրանքից 971-ը պլանավորվել է որպես աուդիտորական, իսկ 76-ը՝ խորհրդատվական ծառայություն

[1]Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

մատուցելու առաջադրանքներ, նույն ցուցանիշները համապատասխանաբար 2021 թվականին կազմել են 867 և 10 , իսկ 2020 թվականին՝ 637 և 44: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2022 թվականին՝ 832 և 76 առաջադրանք, 2021 թվականին՝ 659 և 3 առաջադրանք, 2020 թվականին՝ 339 և 2 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2022 թվականին՝ միայն աուդիտորական 139, 2021 թվականին՝ 208 և 7, 2020 թվականին՝ 298 և 42 առաջադրանք:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակը 2022 թվականին կազմել է 1341 առաջադրանք, 2021 թվականին՝ 1108 և 2020 թվականին՝ 1324, որը ինչպես 2021 թվականի, այնպես էլ 2020 թվականի համեմատությամբ աճել է՝ համապատասխանաբար 21.0%-ով և 1.3%-ով: Նշված ցուցանիշը 2021 թվականին ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 1209, 2021 թվականին՝ 865, 2020 թվականին՝ 567 առաջադրանք, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ 2022 թվականին՝ 132, 2021 թվականին՝ 243, 2020 թվականին՝ 757 առաջադրանք:

Համաձայն նույն աղյուսակով ներկայացված տվյալների ՊՄ-ներում և ՏԻՄ-երում 2022 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 127 աուդիտորական առաջադրանք. գերակատարումը կազմել է 12.4% 2021 թվականի 17,1%-ի և 2020 թվականի 36,4% դիմաց: 2022 թվականին իրականացված լրացուցիչ թվով 127 աուդիտորական առաջադրանքներն իրականացվել են ՊՄ-ներում, ՏԻՄ-երում չեն իրականցվել թվով 7 աուդիտորական առաջադրանքներ (թերակատարումը կազմել է 0,7%):

2022 թվականին մատուցվել է լրացուցիչ (ոչ պլանային) 174 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2021 թվականի 83 և 2020 թվականի 411 խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2022 թվականին, այնպես էլ 2020-2021թթ. կատարվել են 100%-ով:

Համաձայն 2021 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների՝ ունեն ստորև ներկայացված պատկերը.

2022 թվականին ՊՄ-ներում փաստացի իրականացված աուդիտորական

առաջադրանքների քանակները ինչպես 2021 թվականի, այնպես էլ 2020 թվականի համեմատությամբ ավելացվել են:

Այսպես, համակարգի գնահատման աուդիտի քանակը 2021 թվականի համեմատ ավելացել է շուրջ 17.7%-ով, իսկ 2020 թվականի համեմատ՝ շուրջ 4.1 անգամ, ֆինանսական աուդիտի քանակը համապատասխանաբար աճել է շուրջ 2.1 անգամ և 71,9%-ով, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը աճել է 26.3%-ով և 5.7 անգամ, գնումների աուդիտի քանակը աճել է 60%-ով և 78.6%-ով, 2020 թվականին կատարողականի աուդիտ չի իրականացվել, իսկ 2021 թվականի համեմատ աճել է 8.9 անգամ, 2020-2022 թվականներին տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2022 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 200 աուդիտներից՝ 71-ը կամ 35.5%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 128-ը կամ 64%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 1-ը կամ 0,5%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՊՄ-ներում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2020-2022 թվականների ամփոփ ցուցանիշները.



Հաշվետու տարում ՏԻՄ-երում իրականացված աուդիտորական առաջադրանքներում փոփոխությունն ըստ տեսակների 2021 և 2020 թվականների համեմատությամբ ունի հետևյալ պատկերը: Համապատասխանաբար՝ գնումների աուդիտը նվազել է 2,6 անգամ և 16,8 անգամ, կատարողականի աուդիտը աճել է 11,8%-ով և նվազել՝ 68,4%-ով, համակարգի գնահատման աուդիտի քանակը նվազել է 22,2%-ով և 2,8 անգամ, ֆինանսական աուդիտի քանակը նվազել է 43,2%-ով և աճել՝ 2,8%-ով, համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակը նվազել է 3 անգամ և 2,5 անգամ: 2020-2022 թվականների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

2022 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 9 աուդիտներից՝ 6-ը կամ 66,7 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 2-ը կամ 22,2 %-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 1-ը կամ 11,1%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:

Ստորև գծապատկերում ներկայացված են ՏԻՄ-երում փաստացի իրականացրած աուդիտի տեսակների 2020-2022 թվականների ամփոփ ցուցանիշները.



Այսպիսով, ՊՄ-ներում և ՏԻՄ-երում փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքներն ըստ աուդիտի տեսակների ունեն ստորև ներկայացված պատկերը.



Համաձայն ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2022 թվականին գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումասիրվել է թվով 2120 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 1957 գործառույթ, իսկ ՏԻՄ-երում՝ 163 գործառույթ, որից գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 359, այդ թվում՝ ՊՄ-ներում 237, իսկ ՏԻՄ-երում՝ 122, գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 1738 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 1698, իսկ ՏԻՄ-երում՝ 40, պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումներ՝ 23, այդ թվում՝ ՊՄ-ներում՝ 22, իսկ ՏԻՄ-երում՝ 1:

2022 թվականին նվազել է ներքին աուդիտի կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը, մասնավորապես, նախորդ տարվա արձանագրված 5422 անհամապատասխանության փոխարեն հաշվետու տարում արձանագրվել է թվով 5109 անհամապատասխանություն, որից ՊՄ-ներում՝ 4504 և ՏԻՄ-

երում 605՝ ապահովելով 6.1%-ով նվազում: Նշված ցուցանիշը 2021 թվականի համեմատությամբ ՊՄ-ներում աճել է 119-ով կամ 2.7%-ով, իսկ ՏԻՄ-երում նվազել է 432-ով կամ 71,4%-ով: 2022 թվականին աճել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 227-ի, նախորդ տարվա 100-ի փոխարեն, այդ թվում՝ ՊՄ-ներում 106 դեպքնախորդ տարվա 6-ի փոխարեն, իսկ ՏԻՄ-երում՝ 121 դեպք՝ նախորդ տարվա 94-ի փոխարեն:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն[2], ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան:

[2] Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա՝ ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները Կազմակերպություններին արտապատվիրակած մարմիններից և համայնքներից:

Լիազոր մարմին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2022թ.	2021թ.	2020թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.5	3.4	3.0
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.6	3.6	3.2

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	2022թ.	2021թ.	2020թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	199*	127*	203*
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	183	111	174
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	16	16	29

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2022թ.	2021թ.	2020թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	3239	2915	2399
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	17467	15160	11417
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	949	861	558
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	6432	5231	3298
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	949	858	489

* Նշված ցուցանիշը ներառում է ինչպես ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատողներին, այնպես էլ կազմակերպությունների աշխատողներին, ովքեր ընդրկված են եղել ՊՄ-ների և ՏԻՄ-երի ներքին աուդիտի աշխատանքներում:

6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	6248	4904	2693

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	**Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները**	**2022թ.**	**2021թ.**	**2020թ.**
1)	Համակարգի գնահատման աուդիտ	401	354	191
2)	Կատարողականի աուդիտ	81	24	32
3)	Ֆինանսական աուդիտ	269	165	171
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	302	301	118
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	209	148	263*
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	77	30	29*
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	46	26	26*
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	31	4	3*
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	130	47	233*
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	71	19	117*
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	59	28	116*
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	2	71	1*
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	2	14	1*
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	0	57	0*
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	83	81	442

8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	22	12	12
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	2	0	1
10)	Այլ, այդ թվում՝	17	23	94
11)	Ընդամենը	1386	1108	1324

*Գնումների աուդիտի քանակը ներառում է աուդիտի այլ տեսակների շրջանակում իրականացված գնումների աուդիտը ևս, որն իր մեջ ներառել է գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտները, ընդ որում ինչպես գնման ընթացակարգի, այնպես էլ պայմանագրի կատարման մասը:

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2022թ.	2021թ.	2020թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	1047	877	681
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	971	867	637
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	76	10	44
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	1341	1108	1324
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	1091	1015	869
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	250	93	455

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2022թ.	2021թ.	2020թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	5109	5422	2742
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	3795	3156	1788
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	1314	2266	954

2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	4279	4176	2349
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	4569	3407	2277
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	1540	1964	1349
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	298	19	15
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	201	8	128
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	2530	1416	785
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	4064	4170	2159
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	227	100	57
4.2)	Ինքնուրույն կանխված	3837	4070	2102

Ցանկ N 1

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Ազգային ժողով
2. ՀՀ սահմանադրական դատարան
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
4. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
5. ՀՀ առողջապահության նախարարություն
6. ՀՀ արդարադատության նախարարություն
7. ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն
8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
9. ՀՀ պաշտպանության նախարարություն
10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
11. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն[3]
12. ՀՀ կադաստրի կոմիտե
13. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
14. ՀՀ պետական եկամուտների կոմիտե
15. ՀՀ վիճակագրական կոմիտե
16. ՀՀ քաղաքաշինության կոմիտե
17. ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե
18. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե
19. ՀՀ քննչական կոմիտե
20. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
21. ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
22. ՀՀ միասնական սոցիալական ծառայություն
23. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
24. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
25. ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով
26. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով
27. ՀՀ հանրային հեռարձակողի խորհուրդ
28. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
29. ՀՀ դատական դեպարտամենտ
30. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
31. ՀՀ գլխավոր դատախազություն

[3] ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացվող ներքին աուդիտի արդյունքները հաշվետվությունում արտացոլված չեն, քանի որ նախարարությունում ընթացող 2019թ., 2020թ., 2021թ. «Ներքին աուդիտի» աշխատանքները ավարտվելու են սույն թվականի մայիսին, իսկ 2022 թվականի ներքին աուդիտի աշխատանքների մասով 09.02.2023թ. կնքվել է N ՀՀ ԷՆ-ԷԱՃԾՁԲ-22-23/142-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ներքին աուդիտի ծառայության մատուցման» պետական գնման պայմանագիր, համաձայնագիրը նախատեսվում է սույն թվականի մայիս ամսին:

32. ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարություն
33. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե

Մարզպետարաններ

34. ՀՀ Արագածոտնի մարզպետարան
35. ՀՀ Արարատի մարզպետարան
36. ՀՀ Արմավիրի մարզպետարան
37. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
38. ՀՀ Լոռու մարզպետարան
39. ՀՀ Կոտայքի մարզպետարան
40. ՀՀ Շիրակի մարզպետարան
41. ՀՀ Սյունիքի մարզպետարան
42. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
43. ՀՀ Տավուշի մարզպետարան

Ցանկ N 2

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Երևանի քաղաքապետարան
2. Ապարանի համայնքապետարան
3. Բյուրեղավանի համայնքապետարան
4. Գորիսի համայնքապետարան
5. Կապանի համայնքապետարան
6. Հրազդանի համայնքապետարան
7. Ճամբարակի համայնքապետարան
8. Չարենցավանի համայնքապետարան
9. Ջրվեժի համայնքապետարան
10. Սիսիանի համայնքապետարան
11. Վանաձորի համայնքապետարան
12. Տեղի համայնքապետարան